Վահան Թոթովենց

Հրկիզված թղթեր

2

Ե

Առավոտյան, Ելենա Բեգլարովնան գտավ, որ ամուսինն զգալի չափով նիհարել է, դեմքի վրա երևում էին տանջանքի հետքեր:

Այս գիշեր լավ չե՞ս քնել, հարցրեց նա:

Ինչո՞ւ ես հարցնում:

Այնպես…

Պրոֆեսորը չպատասխանեց և սկսեց երթևեկել սենյակում:

Վերջապես ի՞նչ կա, ասա:

Ես հիմնական սխալ կատարեցի, որ իմ կյանքի պրոֆեսիան ընտրեցի պատմությունը:

Ապա ի՞նչ անեիր:

Ունեի լսողություն, ավելի լավ էր դառնայի երաժիշտ, երաժշտության ամեն մի նոտայում հո չէր կարելի իդեոլոգիա որոնել:

Իսկապես, ինչ լավ կլիներ երաժիշտ լինեիր, ես էլ այսքան չէի ձանձրանա, ասաց Ելենա Բեգլարովնան անկեղծորեն:

Պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանին դուր չեկավ կնոջ այդ հայտարարությունը, մոտեցավ նրան և ասաց.

Ձանձրանու՞մ ես, հա՞, աղավնյակս, ես չէի իմանում:

Վերջապես, ամեն օր Նապոլեոն, Մետերնիխ, Ռոբեսպիեռ, Մուրաբո:

Միրա՛բո, ջղայնորեն ուղղեց պրոֆեսորը:

Թող լինի Միրաբո, հետո ի՞նչ:

Երանի ես քեզ պես մտածեի, Մուրաբո, Միրաբո, թերևս և Մեհրաբով, ի՛նչ տարբերություն, բոլորը մեկ է:

Իհարկե:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը ետև դարձավ հանկարծակի, նայեց կնոջը և հոնքերը կիտած, բայց զսպված զայրույթով, ասաց.

Միրաբոն Ֆրանսիական մեծ հեղափոխության գեղեցկությունն էր:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չափազանց գոհ մնաց, որ Ելենա Բեգլարովնան չծիծաղեց, որովհետև նրա համբերությունը հասել էր այլևս պայթելու վտանգավոր կետին:

Այլևս ոչ ոք չխոսեց: Պրոֆեսորը մի առժամանակ սենյակում երթևեկելուց հետո՝ մոտեցավ հայելուն, ուղղեց հոնքերը, բեղն ու միրուքը և դուրս եկավ փողոց: Նրան զարմացրեց փոքրիկ մայրաքաղաքի արտակարգ եռուզեռը:

Ի՞նչ պատահեց, որ այս դանդաղ, ծույլ և հորանջող ժողովուրդը հանկարծ սկսեց աշխուժանալ, ի՞նչ պատահեց, որ արևելյան այս քաղաքը, ետ ընկած, խուլ և անաղմուկ այս քաղաքը հանկարծ բռնվեց արտակարգ շարժման տենդով: Ի՞նչ պատահեց:

Դիտեց պրոֆեսորը չորս կողմը և հիշեց հին արևը, որ հակինթյա անդորրությամբ իջնում էր տափակ կտուրների վրա և ծփում: Ինչքան նոր մարդիկ կան այս քաղաքում, մարդիկ, որոնք երբեք չէին երազել Երևանը, ահա այստեղ են, աշխատում են գիշեր և ցերեկ, կարծես տագնապում: Փողոցներում քարեր, քարտաշների մուրճերի ներդաշնակ ռիթմը և զիլ հնչյունը, ահա բարձրանում են շենքերը, տափակ, միհարկանի կտուրները մնում են ստվերների տակ, արևը վեր է բարձրացել և նստել բարձր շենքերի վրա, մանուկների ճիչը բարձր է և ջինջ, առվի ընթացքն անգամ արագացել է, արևի ոսկյա փրփուրը թափվում է Արարատյան դաշտի վրա, չկա հին ծարավը, խորություններից բարձրանում են ջրերը վեր, նորից հոսում ներքև և դարավոր տոչորող հողը ժպտում է ջրի զովության մեջ:

Ի՞նչ պատահեց:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, որին պատմությունն ըմբռնելու համար հարկավոր էին միայն դոկումենտներ, չէր կարող տեսնել կյանքի կոնկրետ փաստը: Ժամանակակից պատմությունը պետք է հնանար, թաղվեր ժամանակի սև փոշու տակ, դառնար թուղթ և քար, որպեսզի նորից դուրս հանվեր և դառնար բուռն հետաքրքրության առարկա:

Նա անցավ նոր ավարտված մի շենքի առաջից, հետաքրքրությամբ դիտեց շենքը՝ մեծ, լուսավոր պատուհաններ, կապույտ թերթիկներով սքողված կտուր, շենքի ճակատը ներկված վարդագույն, լուսամուտներից դիտելով ներքնակողմը՝ տեսավ, որ յուրաքանչյուր պատը և առաստաղը ներկված են զանազան գույներով և արտակարգ պայծառ գույներով, տեսավ և այդ նոր շենքի կողքին հին տունը, տափակ կտուրով, կուչ եկած, իսկ ճակատին մի քանի սյուներով հենարաններ, որպեսզի փուլ չգա հոգնած փոքրիկ տունը:

Այս նոր շենքը գեղեցիկ է, ասաց նա ինքնիրեն և անցավ, չկարողանալով մոռանալ հենարաններով տունը, ոչ թե նրա համար, որ այդ փոքրիկ տունը բաղդատության դրեց նոր կառուցված շենքի հետ, այլ նմանեցրեց իրեն: Ինքն էլ, պրոֆ . Մելիք-Անդրեասյանը, պարզապես հենարաններ էր կառուցել իր հոգու և իմացականության առաջ, որ չփլչեն:

Մինչև ե՞րբ, հարցրեր նա իր մտքում և ստացավ կոնկրետ պատասխան:

Թերևս ավելի շուտ, քան այդ փոքրիկ հենարաններով շենքը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն այդ կոնկրետ պատասխանից հետո վատ չզգաց, ընդհակառակն, նրան պատեց զարմանալի քաղցրագին մի թախիծ, և իրեն պատկերացրեց նստած, մենակ, տխուր, բայց հավիտենականորեն անդորր, իր սեփական հոգու ավերակների մեջ:

Երբ հասավ նա մի հին եկեղեցու առաջ, որ արդեն փակված էր հաճախորդ չլինելու պատճառով, կանգ առավ մի պահ: Եկեղեցու ներսը տիրում էր կատարյալ լռություն, հին մեղեդիները քարացել էին տխուր, մռայլ և դեռևս խնկավետ պատերի վրա:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանն իսկապես զգաց խնկի հոտը, նրա ռունգները, ասես անասնական սեռային հուզումով, բացվեցին և դողացին հոտի հաճույքից: Այնինչ, իրականության մեջ, եկեղեցու ներքնակողմում պատերը թացացել էին կտուրի կաթելուց, և ջրից կազմված հետքերը սև օձերի նման գալարվում էին պատերն ի վար: Եկեղեցու բովանդակ մթնոլորտը հագեցած էր պատերի, հատակի և առաստաղի մգլածությամբ:

Եթե բաց լիներ եկեղեցին, պրոֆ. Մելիք-Անդրեասյանը կմտներ ներս անպայման, թեկուզ ժամերգություն չլիներ, թեկուզ ոչ ոք չլիներ, կնստեր մի անկյուն, թախիծով և խաղաղությամբ կխոկար լուռ, սրբերից և աստվածներից լքված տաճարում, որտեղ մի ժամանակ, ըստ պրոֆ. Մելիք-Անդրեասյանի, երգվել էին ամենահոգեցունց մեղեդիները, որտեղ հրեշտակներ էին երգել, սպիտակ թևերով, կլոր, գիրուկ և քնքուշ փորերով, որոնց մեջտեղում փայլում էին պորտերը, որպես մարելու մոտ աստղեր երկնքում ճիշտ լուսաբացից քիչ առաջ, որտեղ ինքը՝ աստված, ահեղ և ահավոր, իջել է շատ անգամներ՝ ունկնդրելու իր երկրպագուների ստրկամիտ աղերսը, իջել է մարդկանցից անտեսանելի:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չհամարձակվեց խաչակնքել երեսը, բայց նրա հոգին խոնարհվեց մինչև եկեղեցու շեմքը:

Մի քիչ քայլելուց հետո՝ մեքենայորեն նայեց ժամացույցին և տեսավ, որ արդեն ժամը 6-ին քառորդ պակաս է, իսկ նրա դասախոսությունն սկսվում էր ճիշտ ժամը 6-ին: Շտապեց դեպի ուսումնական հիմնարկը, բարձրացավ ամբիոն և սկսեց իր դասախոսությունը:

Անցյալ դասախոսությամբ, սկսեց պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, մենք հաստատեցինք, թե ինչպես մարդկության ողջ գործունեության, մի խոսքով՝ ամբողջ պատմության հիմքում դեր են խաղում միայն նյութական կարիքները: Այսօրվա դասախոսությունը նպատակ պիտի ունենա այս տեսությամբ, այսինքն՝ պատմության մատերիալիստական ըմբռնման տեսությամբ, քննել Արևմտյան Եվրոպայի խոշորագույն մի երկրի՝ Անգլիայի պատմությունը…

Ջ

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը և Ելենա Բեգլարովնան հետևյալ խոսակցությունն ունեցան մեռոնեփեքի առթիվ: Պրոֆեսորն ուզում էր գնալ Էջմիածին և ներկա լինել արարողության, բայց Ելենա Բեգլարովնան կատեգորիկ կերպով դեմ գնաց նրա այդ ցանկության:

Այնինչ, ես ուրիշ կերպ էի մտածում, ասաց Ելենա Բեգլարովնան:

Ի՞նչ կերպ, հարցրեց պրոֆեսորը:

Ես գնամ, իսկ դու մնա:

Ի՞նչ է տարբերությունը:

Տարբերությունն այն է, որ ե՛ս չեմ պատմության ամբիոնի պրոֆեսորը:

Իսկ դու անկեղծորեն ցանկանո՞ւմ ես ներկա լինել:

Այո՛, պատասխանեց Ելենա Բեգլարովնան տխրությամբ, խոր, խոր տխրությամբ:

Նրա արտասանած երկու վանկում զգալի էին տխրության բոլոր պատճառները ինչո՞ւ լիներ այնպես, որ հավատքի համար անգամ մարդ չկարողանար ազատորեն արտահայտվել: Մի քիչ հետո Ելենա Բեգլարովնան այսպես էլ արտահայտվեց, որին պրոֆեսորը պատասխանեց.

Ո՞վ է քեզ կաշկանդում, ո՞վ է քո ոտը կապում:

Ոչ ոք:

Էլ ինչո՞ւ ես կարծում, որ չի կարելի ազատորեն դիմել դեպի հավատքը:

Իհարկե, ոչ ոք ինձ չի կաշկանդում, միայն неудобно, և ապա քո ամբիոնը, ի՛նչ լավ կլիներ՝ լինեիր երաժիշտ:

Ելենա Բեգլարովնայի և պրոֆ. Մելիք-Անդրեասյանի՝ Էջմիածին գնալու ցանկությունների միջև կար խոր տարբերություն: Ելենա Բեգլարովնան հավատում էր աստծուն, եկեղեցուն, հավատում էր անկեղծորեն, սակայն վախենում էր իր ամուսնու դիրքից, իսկ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չէր հավատում, նրա համար աստծո գոյության գաղափարը չափազանց ծիծաղելի էր, բայց ցանկանում էր գնալ, որովհետև դա հոգեպես մխիթարում էր իրեն, եկեղեցին, տաճարը, մոմերը, խունկը, մթնշաղում ուրվագծվող խաղաղ գմբեթները, մինչև անգամ տիրացուի ռնգային և ռիթմից զուրկ երգը, այդ բոլորը իրեն վերադարձնում էին հին կյանքը, պատմության հին հասկացողությունը, այդ բոլորը սերտորեն, անքակտելիորեն կապված էին պատմության այն իդեաների հետ, որոնք միս ու ոսկոր էին դարձել իր մեջ, և կարողություն չուներ դուրս վռնդելու ու երբեմն զգում էր, որ նորամույծ իդեաները հներից մի քանիսին արդեն դուրս են վռնդել և սկսել են խոր արմատներ գցել իր ներքին աշխարհում:

Երբ Էջմիածին գնալու վճռական կիրակին հասավ, թե՛ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը և թե՛ Ելենա Բեգլարովնան որոշեցին չգնալ:

Մնալով քաղաքում և երկար մտածելով՝ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը եկավ այն եզրակացության, որ սխալ արավ ինքը՝ հարելով հեղափոխության, կարելի էր մնալ չեզոք, պասսիվ, կատարել իր առաջ դրված ակադեմիական

պարտավորությունները և ապրել հոգեկան կատարյալ խաղաղության մեջ: Կային մարդիկ, որոնք, չհաշտվելով քաղաքական հեղաշրջման հետ, ճիշտ է, կորցրին իրենց դիրքերը, բայց ահա պրոլետարիատը եղել է այնքան բարի, որ նրանցից ամեն մեկին էլ ապրեցնում է և վատ չի ապրեցնում. ոմանք թարգմանությամբ են զբաղված, ոմանք կոնսուլտանտներ են, ոմանք մինչև անգամ հիմնարկների դիրեկտորներ են, բայց ինքը, մնալով իդեոլոգիական ֆրոնտի ամենահրատապ կետում՝ պատմության ամբիոնում, ստիպված է ապրել տագնապի և մղձավանջի մեջ:

Էջմիածին գնացողները վերադարձան: Ոչ ոք նկատի չառավ նրանց ներկայությունն Էջմիածնում, նրանք պատմեցին, որ Էջմիածինը վերազարթնել էր ամբողջությամբ, հին շունչը թարմացած, բայց հնի զարմանալիորեն հոգեցունց բույրով, սավառնել էր հին երկնքից հին հողի և դարավոր քարերի վրա:

Իսկ ինքը՝ պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, ինչո՞վ էր զբաղված հենց այդ օրը, ջանում էր գտնել ֆրանսիական մեծ հեղափոխության տնտեսական պատճառները, ճգնելով բոլորովին անտեսել ֆրանսիական ոգու առանձնահատկությունը հեղափոխության պատճառների մեջ:

Է

Մեռոնեփեքից մի քանի օր հետո, հենց հաջորդող երկուշաբթին, պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, պատճառաբանելով, որ Էջմիածնի գրադարանում գտնված մի պատմական երկասիրություն իր համար անհրաժեշտ է, մեկնեց Էջմիածին:

Նա անցավ ծաղկավետ այգիներով, ծառերի բույրը, կարծես խտացած, ծփում էր ալիքի նման, ծառերը, ողջ կանաչությունը լողանում էին իրենց իսկ բույրի ծովում: Անցավ նա փոքրիկ, կարծես անբնական, բլրակների կողքով և զգաց, որ այդ բլրակների տակ թաղված էին հին քաղաքներ, սրբազան կուլտուրայի մնացորդների մի ողջ պատմություն: Երբ հանդիպեց նա առաջին խաչքարերին և նորից տեսավ ընկած և կոտրված քարերի վրա քանդակված խաղողի չքնաղ ողկույզները, դառնորեն ծիծաղեց. «Ինչպե՞ս կարելի է, մտածեց պրոֆեսորը, արվեստի այս բեկորների տակ գտնել տնտեսական ինչ որ բազա, սրանց

քանդակող անհայտ արվեստագետի հոգում ինչպե՞ս կարելի է բռնադատորեն դնել տնտեսական կարիքի ողորմելի հերոսին»:

Կառքը մտավ Հռիփսիմյանց վանքի ստվերը: Առավոտյան զովը վետվետում էր ստվերում, կառքի ձիերը, որոնց սահուն մեջքերից և ջրվեժի նման հոսող բաշերից քրտինքի գոլորշի էր բարձրանում, վանքի ստվերի զովում վրնջացին արևային վճիտությամբ:

Ամբողջ Արարատյան դաշտում արեգակը շարժվում էր կոհակ առ կոհակ, բարձր, սեգ, երկնասլաց կաղամախիները ծփում էին արեգակի հորդ կոհակներում, և վանքերի գմբեթները արևի միջից սլանամ էին դեպի երկինք:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը հասավ վանքի բակը և ուղղակի դիմեց գրադարան, որտեղ ընդունեց նրան գրադարանի վարիչը, ճաղատ գլխով, ժպտերես, հոգնած աչքերով և հանդարտաբարո մի մարդ, որը, նախքան պրոֆեսորի ներս մտնելը, կռացել էր միջնադարյան մի երգչի ձեռագրի վրա և ճգնում էր կարդալ:

Գրադարանի վարիչը զարմացավ՝ տեսնելով պրոֆ. Մելիք-Անդրեասյանին իր գրադարանում, որովհետև հաստատ համոզված էր, որ նրան, բացի Արևմտյան Եվրոպայի պատմությունից, ոչինչ չէր շահագրգռում: Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը ճանաչված էր որպես չափազանց նեղ մասնագետ:

Սովորական ողջույնից հետո՝ պրոֆեսորը խնդրեց վարիչից գերմանացի ճանապարհորդի մի գիրքը և ստանալով այդ գիրքը, քաշվեց ու սկսեց կարդալ:

Նրա ընթերցումը երկար չտևեց, թերթեց մի քանի գլուխ, կարդաց մի քանի էջ, իբր թե նոթեր վերցրեց և վերադարձրեց գիրքը:

Արդեն վերջացրի՞ք աշխատանքը, հարցրեց գրադարանի վարիչը զարմացած:

Այո, ինձ շատ բան հարկավոր չէր, միայն մի քանի թվական տվյալներ, ուրիշ ոչինչ:

Ի՞նչ կա-չկա քաղաքում, հարցրեց գրադարանի վարիչը:

Ոչինչ, միևնույնն է, ինչ որ գիտեք:

Ասում են հիդրոշենի կառուցումը վերջանում է, հարցրեց գրադարանի վարիչը, որի աչքերում փայլում էր ուրախության ցոլքը:

Օ՛, այդ տեսակետից, այո, կառուցումները շատ լավ են, պատասխանեց պրոֆեսորը բոլորովին զարմացած, որ միջնադարյան երգչի ձեռագրի վրա կռացած մարդը, գրքի այդ որդը, հետաքրքրվում էր ժամանակակից կյանքով, այն էլ ամենավերջին նորություններով:

Ձեզ մոտ հետաքրքրական բաներ շատ կան, գեթ եղել են:

Գրադարանի վարիչը գլխի չընկավ:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը շարունակեց.

Ապրելով այստեղ, այս որմերի ստվերների տակ, ստանում եք հին կյանքի բույրը. ահա մի քանի օր առաջ ձեզ մոտ տեղի ունեցավ շատ նշանակալից դեպք:

Գրադարանի վարիչը նոր գլխի ընկավ, որ պրոֆեսորն ակնարկում էր մեռոնեփեքի տոնը:

Այո, հավաքվեցին այստեղ հազարավոր մարդիկ, հեռավոր քաղաքներից և գյուղերից, լցվեցին, թափվեցին իրար վրա, կեղտոտեցին ամեն տեղ, տեսնու՞մ եք, այժմ լուսամուտն անգամ չի կարելի բաց անել, գարշելի հոտը խուժում է ներս և շնչել չի կարելի, ահա ձեզ հին բույրը, ասաց գրադարանի վարիչը՝ թթվեցնելով երեսը:

Այն ժամանակ միայն պրոֆեսորն զգաց, որ իսկապես գյուղի փողոցներից անցնելիս, մանավանդ վանքի բակը մտնելիս՝ այդ գարշելի հոտը փչում էր կատաղի կերպով:

Նու՛, ոչինչ, կանցնի, վախկոտ հարեց պրոֆեսորը՝ կարծելով, որ գրադարանի վարիչի անդորր բնավորությունը կարող է պայթել:

Այո, կանցնի, իհարկե կանցնի, ամեն կեղտոտություն վերջ ի վերջո կտարրալուծվի, կհոսի, կգնա, բայց ահա քանի օր է՝ մաքրում են, վերջ չկա, ասաց գրադարանի վարիչը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը չուզեց խոսակցությունը շարունակել, որովհետև զգաց, որ Էջմիածնի գրադարանում, հին և սրբազնագույն ձեռագրերի մթնոլորտում ապրում է մի մարդ, որ հոգու մինչև հատակը զզվել է այդ շրջապատից և եթե հնարավոր լինի, կկտրի, կպոկի այդ գրադարանը հողից, կթռցնի մի տեղ և նորից կկռանա գրքերի վրա՝ հաճույք զգալով տքնաջան, քրտնաթոր և մաշեցնող աշխատանքից: Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, դուրս գալով գրադարանից, մի պտույտ գործեց մայր եկեղեցու շուրջը՝ աչքի պոչով նայելով կաթողիկոսանիստ շենքին ամեն անգամ, երբ գալիս հասնում էր եկեղեցու գլխավոր դռանը: Նրան դիտողը երբեք չէր կարող կարծել, որ նա Էջմիածին էր եկել հատկապես մտնելու կաթողիկոսի մոտ: Պրոֆեսորը զննողաբար նայեց չորս կողմը, անձկությամբ սպասեց, որ վանքի բակը ոչ ոք չմտնի, որպեսզի սողոսկի դեպի վեհարանը, բայց կային ցանցառ անցուդարձեր և զարմանալիորեն դանդաղ: Հուսահատվելով, որ երթևեկությունը կդադարի, նա մտավ, պարզապես սողոսկեց դեպի այսպես կոչված վեհարանը:

Ը

Կաթողիկոսը պրոֆ. Մելիք Անդրեասյանին չէր սպասում, որովհետև մինչև անգամ չեկան այն մարդիկ, որոնց սպասում էր, էլ ուր կմնար Մելիք-Անդրեասյանը, որն ամենաշուտ բեկվողներից մեկի համբավն էր վայելում:

Ձերդ սրբություն, ներողություն եմ խնդրում, ասաց պրոֆեսորը կաթողիկոսի ձեռքը համբուրելուց հետո, որ մեծ տոնի օրը չկարողացա ներկայանալ:

Քրիստոսի հոտի մեջ բազում են մոլորյալք, պրոֆեսոր, պատասխանեց կաթողիկոսը ցավագին շեշտով:

Ձերդ սրբությունը, իհարկե, մտնում է մեր դրության մեջ, շարունակեց պրոֆեսորը՝ մի աթոռի վրա տեղավորվելով:

Իսկ դուք մտնու՞մ եք իմ դրության մեջ, հարցրեց կաթողիկոսը: Հարցը շատ շեշտակի էր, պրոֆեսորը հարմար համարեց լռել:

Լռությունից օգտվելով՝ կաթողիկոսը զանգ տվեց:

Ծառան անմիջապես ներս մտավ և ընտանի կերպով մոտեցավ կաթողիկոսին: Վերջինս գրպանից հանեց փոքրիկ բանալիների մի փունջ և, բռնելով նրանցից մեկը, ասաց.

Պրոֆեսորին թեյ կբերեք լիմոնով:

Ծառան բանալին վերցրեց և դուրս գնաց:

Պրոֆեսորը լսել էր, որ զառամյալ կաթողիկոսն իր տան անձնական տնտեսությանը խստիվ հետևող մի մարդ էր, բայց երբեք չէր կարծում, որ պահարանի բանալին պահում էր հայրապետական պատմուճանի գրպանում:

Այժմ լիմոն դժվար է ճարվում, պրոֆեսոր, ասաց կաթողիկոսը:

Քաղաքում բոլորովին չկա, Ձերդ սրբություն, արձագանքեց պրոֆ. Մելիք-Անդրեասյանը մեքենայորեն:

Այո, լսել եմ: Ասացեք, խնդրեմ, լիմոնին ի՞նչ պատահեց, հարցրեց կաթողիկոսն այնպիսի լուրջ և ցավագին տոնով, կարծես հարցնելու լիներ, թե ի՞նչ պատահեց հայկական հարցին:

Մի պահ նորից լռություն տիրեց: Պրոֆեսորն անձկությամբ սպասում էր լսելու կաթողիկոսի կարծիքը մեր օրերի մասին, ուստի, մի կողմ դնելով ծառայի մատուցված թեյը՝ երկյուղածությամբ և դողդոջուն ձայնով հարցրեց.

Ի՞նչ է մտածում Ձերդ սրբությունը:

Ինչի՞ մասին:

Նու, առհասարակ:

Գիտեք, պրոֆեսոր, մենք մի վարդապետ ունենք, Պոլսից է, նախքան վարդապետ ձեռնադրվելը եղել է դեղագործ, այդ մարդն ինձ համար ուղղակի փրկություն հանդիսացավ:

Ի՞նչ տեսակետից, Ձերդ սբրություն, խորապես հետաքրքրվեց պրոֆեսորը:

Դեղորայք, կոմպրես, բանկաներ, կլիզմա և այլն:

Հրաշալի է…

Պրոֆեսորը ձեռքը երկարեց թեյին, մտադրվեց այլևս հարց չտալ, բայց մի ներքին ուժ մղեց նրան: Ձերդ սրբություն, ես կցանկանայի իմանալ ձեր կարծիքը մեր էպոխայի մասին:

Էպո՞խայի… ողջ աշխարհը գժվելու է, զավակս, այս գաղափարը… ի՞նչ են ասում դրան, հըմ, այս…

Սոցիալիզմը:

Այո, սոցիալիզմը, դա որ դուրս եկավ, ողջ աշխարհը տակնուվրա է անելու:

Իսկ ի՞նչ է Ձերդ սրբության կարծիքն այդ մասին, հարցրեց պրոֆեսորը:

Քրիստոնեական եկեղեցու պետին այդ հարցը, ես կարծում եմ, ավելորդ է, պարզ է՝ բացի քրիստոնեական հավատքից չի կարող ուրիշ ոչ մի հավատք գոյություն ունենալ մեզ համար:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը պատրաստվեց մի հարց ևս տալ, բայց քրիստոնեական եկեղեցու պետը նորից զանգ տվեց: Ծառան մտավ ներս:

Բարնաբաս, ասաց կաթողիկոսը, բանալիները չբերիր:

Այս ոոպեիս, վեհափառ, պատասխանեց Բարնաբասը և փութկոտ վազեց դուրս:

Մի քիչ անուշադրություն և պրծավ… ոչինչ չի մնա պահարանում, ջղային ավելացրեց քրիստոնեական դարավոր եկեղեցու պետը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը որոշեց, այլևս ոչ մի հարց չտալ: Երբ Բարնաբասը վերադարձրեց բանալիները, կաթողիկոսը դրեց գրպանը և գոհունակությամբ շշնջաց.

Այսպես:

Պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանը, օգտվելով Բարնաբասի ներս մտնելուց, թեյը թողեց կիսատ, ոտի կանգնեց և մոտենալով կաթողիկոսին:

Ձերդ սրբություն, ասաց նա, թույլ տվեք հեռանալ:

Կաթողիկոսը երկարեց ձեռքը՝ պատրաստ անելով համբուրելու, բայց պրոֆեսորը սեղմեց այն և հեռացավ:

Վանքի բակում՝ մի ծառի թանձր և հաճելի ստվերի տակ կանգնած, պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանն ամաչեց ինքն իրենից: «Ահա հնի սիմվոլը, ահա այն անձնավորությունը, որի մեջ պետք է բարձրացած լինեին հին հավատքի մարմարյա սյուները, բայց լիմոն, պահարան, բանալիներ և կլիզմա…» շշնջաց:

Նա հեռացավ ծառի ստվերից, մի քիչ առաջացավ և կանգնեց Լուսավորչի եկեղեցու ստվերի տակ: Արդեն սկսվել էր միջօրեի խեղդիչ տապը:

Աղեխարշ, ողբագին մի լռություն էր չոքել ամբողջ վայրում, շրջապատը նման էր վիթխարի մի դամբարանի, որի մեջ նայում է արևը՝ նախքան հողը թափվելը:

Տապ: Ամառային միջօրե: Արևը, հնոցի նման, կրակ էր մաղում:

Պրոֆեսորի սիրտն սկսեց տոչորվել արարատյան լայնաբաց և հակինթյա հրդեհում:

Մի շուն, մազերը տեղ-տեղ թափած, պառկել էր մի ծառի շվաքի տակ, լեզուն դուրս ձգած: Հավերը կախ էին գցել թևերը: Բակում կային մարդիկ, բայց չէին խոսում: Նստարանների վրա նստած մարդիկ մինչև անգամ իրար երես չէին նայում, լուռ էին: Լուռ էին նրանք մեռելների նման:

Պրոֆ.Մելիք-Անդրեասյանը մտավ եկեղեցի:

Հինավուրց գանձարանը բաց էր: Պրոֆեսորն առաջացավ դեպի գանձարանը: Մարդկային հոգու փրկությանը նվիրված այս եկեղեցուն կից կառուցված գանձարանը լեցուն էր գույնզգույն, վառվռուն մետաքսներով, արծաթով, ոսկով և ադամանդներով:

Ահա մի ոսկյա թև, բթամատն ու մատնեմատը իրար կպցրած: Լուսավորչի աջն է՝ պարուրված ոսկով: Մի պառավ կին կռացած՝ մաշած և դեղնած, մոտենում է, համբուրում ոսկին և խաչակնքում: Պրոֆեսորի աչքին խփում է Լուսավորչի աջի կողքին դրված մոմապատ, կեղտոտ գանձանակը: Պառավը հեռանում է առանց փողի մի փոքրիկ բեկորով հրճվեցնելու գանձանակի փորը:

Լուսավորչի աջն է, ասում է պրոֆեսորին մի վարդապետ, որ հսկում է հավատացյալներին՝ գողություն չանեն:

Վարդապետը խոսքն ուղղում է հատկապես պրոֆեսորին, որովհետև նրա դեմքի վրա նշմարում է թեթև հեգնական ժպիտ:

Գիտեմ, պատասխանում է պրոֆեսորը: Նրա պատասխանի տոնը զգացնել է տալիս վարդապետին, որ ինքն ավելի լավ գիտե այդ, քան նա: Պրոֆեսորն ուշի-ուշով նայում է վարդապետին, որը, թվում է պրոֆ. Մելիք-Անդրեասյանին, աղավաղված մի նախադասություն է, որից չի կարելի որևէ իմաստ դուրս բերել, ամենաշատը՝ մի ծամածռված անճոռնի բովանդակություն:

Բայց հայր սուրբը սիրալիր է: Մոտենում է նա ոսկեհուռ և ադամանդակուռ մի տուփի, խաչ հանում, բաց անում և ասում.

Սա այն գեղարդն է, որով ծակեցին Քրիստոսի կողը:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը լուռ է, անշարժ, նրա կողքին կեցող մի ծերունի հավատացյալ դողում է վարդապետի հայտարարությունից, նրա հոգին սարսուռ է զգում, իսկ պրոֆեսորը մտածում է. «Ո՞ր սաղիմացի վաճառականն արդյոք բերել է երկաթի այդ կտորը և մեծ գնով ծախել հայոց Մայր Աթոռին, բայց այդ վաճառականը մի անգամ է խաբել, իսկ Էջմիածնի վանականները դարեր խաբել

են միամիտ ժողովրդին»:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը դուրս եկավ գանձարանից և մտավ եկեղեցու ներսը: Մի ուրիշ վարդապետ մկրտություն է անում: Ավազանի ջուրը կեղտոտ է, բայց չի կարելի փոխել – սուրբ է: Զանազան հիվանդություններ ունեցող մանուկներին կոխում են միևնույն ջրի մեջ, վարակում են իրար: Մկրտող վարդապետը, ծուլությունից հոգնած, մի երգ է թափում միրուքից վար, սրբում է երեխաներին սկզբնական մեղքից, այն առաջին մեղքից, որ այրում է կենդանական և բուսական ողջ օրգանական աշխարհը:

Պրոֆեսորն ուշի-ուշով դիտում է հին արվեստագետների գործերը՝ խորանի առաջամասի մարմարների վրա նկարված առաքյալներն ու սուրբերը, որոնք ամեն տարի օճառով լվացվում են, բայց նկարներն ավելի և ավելի են պայծառանում: Հիանում է պրոֆեսորը ներկերի այդ տեխնիկայով, հիանում է այն արվեստագետներով, որոնք իրենց հանճարը մաշեցին միջնադարյան հոգու խորշակալից անապատում:

Պրոֆեսորը դուրս եկավ եկեղեցուց:

Մի ծերուկ գյուղացի, արցունքն աչքերին, խաչակնքում է ինչ-որ հայրապետի գերեզմանի առաջ: Դողդոջուն ձեռքեր ունի այդ գյուղացին, արևից այրած և ակոսված դաժան ճակատ, երեսի խորշոմները, խոր կնճիռները պատմում են արարատյան հողի խուժդուժ պատմությունը, տապը նրան տոչորել է, կծկել, չորացրել և խանձել:

Պրոֆեսորը մոտենում է նրան:

Քեզ հող տվե՞լ են, հարցնում է նա:

Տվել են:

Ի՞նչ ես անում այստեղ, ինչո՞ւ ես վանք եկել:

Եկել եմ աղոթելու, որ հողս բերք տա:

Պրոֆեսորը նրան համոզում է, որ աղոթելով հողը բերք չի տա, պիտի լսել միայն գյուղատնտեսական հրահանգչին:

Է՞հ, փուճ է:

Ի՞նչը:

Բոլորը:

Գյուղացին ձեռքը թափ է տալիս ու անցնում:

Պրոֆ. Մելիք-Անդրեասյանը մտնում է Ղազարապատ:

Կլոր դարավոր ծառի տակ նստած է մի կին՝ լուռ: Պատի տակին մի հավ՝ թևերը ձգած մինչև գետին:

Անսահման ողբ և լռություն:

Անկյունի սանդուղքներից վար է իջնում մի եպիսկոպոս, ձեռին մի հարթուկ: Նայում է եպիսկոպոսը պրոֆեսորին կարծես, ուրիշ աշխարհից է դիտում նա:

Լճում ջուր կա՞, հարցնում է պրոֆեսորը ծառի տակի կնոջը:

Շոգ է, պատասխանում է կինը և երեսը շուռ տալիս:

Այո, չպիտի խոսել: Վիթխարի հնոցը վառված է, հրդեհված է Արարատյան դաշտը: Այդ բովանդակ մթնոլորտում մենակ լուսավոր կետը Արարատի գագաթի ձյունն է, որ հեռվից հեռու զովության պատրանք է տալիս:

Պրոֆեսորը նայում է շուրջը, ոչ մի կետ այդ վանքում այնքան համապարփակ ողբերգական չէ, որքան Ղազարապատը: Կարծես դարեր չի ավլվել, չի մաքրվել այդ վայրը, ինչ որ քամին է բերել և ինչ որ քամին է տարել, այդպես էլ մնացել է, անխնամ, անծաղիկ, ինչպես վանականի հոգին: Այդ վայրը մինչև անգամ զուրկ է քրիստոնեական միստիցիզմից: Հողե պատերը քայքայվում են, հետզհետե հավասարվում են գետնին, ոչ մի մելոդիա, ոչ մի հրեշտակի անտեսանելի թև:

Պրոֆեսորը քայլերն ուղղում է դեպի լիճը:

Ջուր չկա, հատակում մի քանի ոտնաչափ տիղմ է նստած, մեջը՝ հազար ու մի կեղտոտություններ՝ ձմերուկի կեղև, շորի գույնզգույն կտորներ, փտած խնձորներ և մի փոքրիկ նավակ՝ խրված տիղմում:

Պրոֆեսորը վաղուց է չի եղել այդ վայրում, ինչ-որ չի համապատասխանում այդ վայրը իր նախկին տպավորություններին:

Ի՞նչ է պատահել:

Այո, հիշում է հիմա:

Առաջ մի մթին անտառ էր տարածվում դաշտում՝ լճի ձորակից սկսած, անտառից ոչ մի հետք չի մնացել, ոչ մի ծառի ոչ մի արմատ չի երևում, հիմնահատակ կործանվել է ամեն ինչ, մի աներևույթ, հզոր և դաժան ձեռք արմատախիլ է արել ամեն մի շնչող ծառ, կամ մի անագորույն հրդեհ լափլիզել է բովանդակ անտառը:

Երեկոյան ղողանջում է դարավոր եկեղեցու զանգը: Այդ զանգը, մի ժամանակ, հավատացյալների բուռն բազմություն էր հավաքում եկեղեցում: Այժմ ղողանջին պատասխանում է մեկ հատիկ պառավ կին, աչքերը ճպռոտած, ականջները ծանր, դողդոջուն: Պառավը հպարտ է, որ երեկոյան ժամերգությունն սկսվում է իր համար և իր համար էլ վերջանում է: Ուրեմն, աստծու ականջը բոլորովին ազատ է լսելու միայն իր ձայնը, և պառավը, կատաղած եռանդով, կանչում է աստծուն՝ փրկել իր մեկ հատիկ անհավատ որդուն, որ բոլշևիկ է և կռվում է եկեղեցու դեմ:

Գիշերը լուսին կա, լիալուսին, որ սպիտակ և կլոր հացի նման բացվել է կապույտ երկնքում: Եկեղեցիների և մատուռների սիլուետները որոշապես գծագրվում են լուսնի շողերի տակ: Գիշերվա մեջ արարատյան հին ոճն ավելի ռելիեֆ է, ավելի ցայտուն, քան ցերեկը:

«Եվ կան մեզանում մարդիկ, մտածում է պրոֆ. Մելիք-Անդրեասյանը, հենց ես ինքս նրանցից եմ, որ փարված են հին այդ ոճին, շղթայված մոմապատ մատուռների մթնշաղում: Պետք է հանգիստ թողնել այդ որմերը, խաչքարերը, բարձր, նեղ, դիմահար պատուհանները, մեզ հարկավոր են կառուցումներ, որոնց

մեջ արեգակը հեղեղի, ծեփի բոլոր պատերը ոսկով ու արծաթով: Մեզ հարկավոր չեն աղամանդակուռ վարագույրները, մեզ հարկավոր չեն սրմահյուս շուրջառներ, ոսկեպատ խաչվառներ և ակնեղեններով հագեցած հայրապետական գավազաններ, մեզ հարկավոր են պարզ, կարմիր դրոշներ, թող տան մեզ լուսածոր ոճ, առանց մթին խորշերի, խորհրդավոր անկյունների, առանց ներքնագավիթների և դամբարանային սրահների, մեր քանդակները թող լինեն առանց մանվածապատ գծերի, առանց իրար մեջ անցած խրթին կորությունների, թող լինի այնքան պարզ և այնքան շողշողուն, ինչպես արարատյան խաղողը»:

Գիշերն իջնում է խաղաղությամբ, կարծես, մեռելները վեր են բարձրանում և հսկում գիշերը, ոչ մի շարժում, ոչ մի ոտնաձայն, լռել է բնության ձայնը: Եվ հեռավոր դաշտերում հասունանում է ժողովրդական հացը, լուսնի շողերի տակ ծփում է ցորենը:

Լուսնի շողերից ձգվել են մատուռների երկար ստվերները սև քղամիդների նման: Այդ ստվերների միջից հանկարծ դուրս է գալիս մի վանական, լուսնի շողերի տակ նա նման է թաթերը վեր բարձրացրած սև արջի, որ անճոռնի քայլերով առաջանում է:

Ահավոր մի դամբարան է այդ վայրը: